ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրառատ համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ջրառատ, Հեռ. (0231) 60575 ,
jraratgyux@mail.ru

N 89
16 ապրիլ 2021թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մեխակյան

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 15-ի N 15 <<Ինքնակամ կառուցված շինությունը օրինականացնելու մասին>> որոշումը:
Առդիր՝ 1 թերթ

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

Կատ. Աշխատակազմի քարտուղար /2-րդ դասի խորհրդական/ Մ. Առաքելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

15 ապրիլի 2021թ. **Ո Ր Ո Շ Ո Ւ Մ** Թիվ 15

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի բնակչուհի՝ Սվետլաննա Անդրանիկի Տերտերյանը (ծնված 25.07.1973 թվականին) դիմել է ՀՀ Արմավիրի մարզ Զրառատ գյուղի Իսահակյան փողոց 46/1 հասցեում գտնվող 0,0285 հա հասարակական հողամասի վրա օրինական կառուցված շենքի ընդհանուր մակերեսը կազմում է 276,5 քառ.մ և արտաքին մակերեսը 327,9 քառ.մ / և պարիսպը 1,6 ք.մ ծրիկանացնելու խնդրանքով:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ին N 470–Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրինական ճանաչել Սվետլաննա Անդրանիկի Տերտերյանին պատկանող Զրառատ համայնքի Իսահակյան փողոցի 46/1 հասցեում գտնվող հասարակական կառույցը արտաքին՝ 327,9 քառ.մ, պարիսպը 1.6 քմ. ճանաչել օրինական:
2. Հասարակական կառույցի օրիկանացման համար վճարը կազմում է 1,0 քմ, համար 2200դրամ / 2200 դ * 327,9 քմ=721380 / յոթը հարյուր քսանմեկ հազար երեք հարյուր ութսուն / ՀՀ դրամ, և պարիսպի օրիկանացման համա 1,6քառ. մ 2200դրամ, 1,6 ք.մ*2200=3520 / երեք հազար հինգը հարյուր քսան/ ՀՀ դրամ վճար, ընդամենը 724900 / յոթը հարյուր քսանչորսը հազար ինը հարյուր / ՀՀդրամ: Որոշման ընդունման օրվանից 60 օրվա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3.Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզային միավորման ստորաբաժանման կողմից:
4. Անվավեր ճանաչել 1 հունիսի 2020 թվականի թիվ 6 որոշումը:
5. Վերը նշված կառույցը ճանաչել օրինական:
6.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում որոշման պահից:

Զրառատ համայնքապետ՝ Ս.Գալստյան
15. ապրիլի 2021թվական
Գ.Զրառատ